ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/35 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	ՀՀ փոխվարչապետի 2020թ. սեպտեմբերի 11-ի N 555-Լ որոշումով հաստատված Սկավառակի տրամագիծը 35 մմ է, այն ոսկեգույն է, պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից, փայլատ տեխնոլոգիայով և արտադրվում է դրոշմման ճանապարհով: Սկավառակի դիմերեսին պատկերված ՀՀ հարկադիր կատարումս ապահովող ծառայության ռելիեֆային խորհրդանշանը' կենտրոնական մասում պատված երկնագույն արծնիով: Խորհրդանշանը ներքևի մասում եզերվում է «ԵՐԿԱՐԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» գրվածքով, իսկ վերևի մասում' արծնապատ եռագույնով: Մեդալի վերևի կենտրոնական մասում լազերային մեթոդով գրված է «15 ՏԱՐԻ» գրվածքը: Մեդալի դարձերեսին հայերեն ուռուցիկ մեծատառերով գրված են «ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» բառերը: Կախիչը պատրաստվում է ամուր մետաղից և ունի հնգանիստ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնություն ունեցող հարկադիր կատարումն ապահովող ծառայության գույները խորհրդանշող գույների ժապավենով: Ժապավենի հիմնամասը սև է, որի վրա առկա են 2 մմ լայնքով դեղին գույնի 3 զոլակներ: Կախիչի վերևի մասի երկարությունը 27 մմ է, ներքևի մասինը' 47 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը' կենտրոնից մինչև ներքևի գագաթը' վերից վար 50 մմ է: Կախիչի դարձերեսին ամրացված է մեդալը հագուստին ամրացնելու հարմարանք: Մեդալի դարձերեսին դրոշմված է «Հարկադիր կատարման ծառայություն» բառերը և մեդալի հերթական համարը: Համապատասխան տուփով: Մեդալի պատկերը' համաձայն նկարի: «15 ՏԱՐԻ ԵՐԿԱՐԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ՄԵԴԱԼ

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/35 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	